**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/51» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 02 նոյեմբերի 2018թ.

ժամը $11^{00}$

**Մասնակցում էին**

<u>*Գնահատող*</u>՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,

ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,

ՀՀ ԶՈՒ ԱՀՏԱ վարչության ԲՀԱ ղեկավարման բաժանմունքի ավագ սպա, մայոր Ա. Օհանյան,

**Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/51» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ. Վարդանյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Գ. Վարդանյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/51» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ 1 «Գնոմոն» ԲԲԸ»-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերի պայմաններին, իսկ «Կանտասուվ» ՍՊԸ-ի՝ հրավերի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն ամբողջական չէին/թերի էին, մասնավորապես, թերի էին Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված՝ «*հայտը ներկայացնելու փարվա և դրան նախորդող երեք փարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը*» դրույթի պահանջով ներկայացված փաստաթղթերը, դրանց կատարողական ընդհանուր արդյունքը չէր կազմում մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի առնվազն 50%-ը, ինչպես նաև, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Կանտասուվ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտների հանրագումարը կազմում էր ընդհանուր 972 500 ՀՀ դրամ, ինչը չի բավարարում Ընթացակարգի հրավերով /ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 63-րդ կետի 1-ին մասի «ա» պարբերություն/ սահմանված «Ֆինանսական միջոցներ»-ի պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 02.11.2018թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ առաջարկել «Կանտասուվ» ՍՊԸ-ին ծանուցումը ստանալուց հետո, սահմանված կարգով, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: 05.11.2018թ. «Կանտասուվ» ՍՊԸ-ն ներկայացրել է վերոնշյալ անհամապատասխանությունների շտկում, որոնք 05.11.2018թ. շարունակված նիստի ժամանակ գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել և համարվել են հրավերի պայմաններին համապատասխանող:

Հաշվի առնելով 01.11.2018թ. ստացված՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ 1 «Գնոմոն» ԲԲԸ»-ի և «Կանտասուվ» ՍՊԸ-ի /համապատասխան շտկումից հետո/ ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.2 05.11.2018թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » «Գևորոն» ՓԲԸ»-ի և «Կանտոասով» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները գնահատել համապատասխանող «ՀՀ ՊՆ ՆՏԱՊ-ԳՀԱՊՁԲ-7/51» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱՊ-ԳՀԱՊՁԲ-7/51» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ. Վարդանյան)

2.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱՊ-ԳՀԱՊՁԲ-7/51» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՑ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Գնահատող Հ.Մելիքյան

Գնահատող Վ. Պապյան

Գնահատող Գ. Ռիստյան

Գնահատող Ա. Օհանյան

Գնումները համակարգող՝ Գ. Վարդանյան